

ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԴԱՎԹՅԱՆ ԱՐԹՈՒՐ ՌԱԶՄԻՎԻՇ

ՄԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՏԱՐԲԵՐ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐՈՒՄ.
ՏԵՄԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱՀԱՄԵՄՏԱՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

ԺԲ.00.01 - «Պետության և իրավունքի տեսություն և պատմություն, պետական և իրավական ուսմունքների պատմություն» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՄԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2023

РОССИЙСКО-АРМЯНСКИЙ УНИВЕРСИТЕТ

ДАВТЯН АРТУР РАЗМИКОВИЧ

**СУЩНОСТЬ И СОДЕРЖАТЕЛЬНЫЕ ОСОБЕННОСТИ СОБСТВЕННОСТЬ ПРАВА В
РАЗНЫХ ПРАВОВЫХ СИСТЕМАХ: ТЕОРЕТИКО И СРАВНИТЕЛЬНОГО ПРАВОВЫЕ
ИССЛЕДОВАНИЯ
АВТОРЕФЕРАТ**

диссертации на соискание ученой степени кандидата юридических наук по специальности 12.00.01 - «Теория и история государства и права, история государственных и правовых учений»

ЕРЕВАН – 2023

**Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի
և իրավունքի ինստիտուտում**

Գիտական ղեկավար՝

Իրավաբանական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր **Գ.Հ. Սաֆարյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ Իրավաբանական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր **Հ.Մ. Ստեփանյան**

Իրավաբանական գիտությունների թեկնածու
Հ.Ջ. Սարգսյան


Առաջատար կազմակերպություն՝ **ՀՀ ոստիկանության կրթահամալիր**
Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2023 թվականի դեկտեմբերի 2-
ին ժ.11⁰⁰ -ին Հայ-Ռուսական համալսարանում գործող ՀՀ ԲՈՒԿ-ի Իրավագիտության
063 մասնագիտական խորհրդի նիստում (0051, ք. Երևան, Հովսեփ Էմին 123):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայ-ռուսական համալսարանի գիտական
աշխատողների գրադարանում:

Սեղմագիրն առաքվել է 2023 թվականի հոկտեմբերի 20-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝

Իրավաբանական գիտությունների թեկնածու

 **Օ.Հ.Հայրապետյան**

Тема диссертации утверждена в Институте философии, социологии и права НАН РА

Научный руководитель: доктор юридических наук, профессор **Сафарян Г.Г.**

Официальные оппоненты: доктор юридических наук, профессор **Степанян О.М.**

кандидат юридических наук, **Саргсян О.З.**

Ведущая организация: **Академия образовательного комплекса Полиции РА**


Защита состоится 2-ого декабря 2023 г. 11⁰⁰ часов на заседании специализированного
совета 063 по Юриспруденции ВАК РА при Российско-Армянском университете (г.
Ереван, 0051, Овсепя Эмина 123).

С диссертацией можно ознакомиться в читальном зале научных работников библиотеки
РАУ.

Автореферат разослан 20-ого октября 2023г.

Ученый секретарь специализированного совета

кандидат юридических наук

 **А. Айрапетян**

Աշխատանքի ընդհանուր բնութագիրը

Հետազոտության թեմայի արդիականությունը: Թեմայի հետազոտության արդիականությունը, ամենից առաջ պայմանավորված է հայ հասարակության առջև ծառայած սոցիալտնտեսական մարտահրավերներով, սեփականության իրավունքի երաշխավորված պաշտպանության կառուցակարգի կատարելագործմամբ, որն իր հերթին կխթանի տնտեսությունում տեղական և արտասահմանյան ներդրումների գործընթացը:

Ցանկացած քաղաքացիական հասարակության և տնտեսության համար դժվար է գոյատևել, առավել ևս զարգանալ, եթե իրավաբանորեն (նաև դատական կարգով) պատշաճ պաշտպանված չէ սեփականության ինստիտուտը և սեփականատիրական հարաբերությունները:

Սոցիալտնտեսական հարաբերությունների անկյունաքարը՝ սեփականության իրավունքի իրականացման կառուցակարգն է և դրա հետ կապված իրավակարգավորումների սոցիալական բնույթը: Ժամանակակից հայոց ազգային իրավակարգում և տնտեսությունում սեփականության իրավունքը ձեռք է բերել սոցիալական նշանակություն և սոցիալ-իրավական արժեքի կարգավիճակ: Այսպես, օրինակ, Մարդու իրավունքների Եվրոպական դատարանը 2019 թվականի հոկտեմբերի 31-ի դրությամբ ընդդեմ Հայաստանի, կայացրել է 20 վճիռ «սեփականության իրավունքի» խախտումների վերաբերյալ, որից 12ը վերաբերում է Երևանի Բյուզանդի փողոցի քաղաքացիների սեփականության իրավունքի կոպտագույն խախտումներին: Հետևաբար, առանց սեփականության ինստիտուտի երաշխավորված պաշտպանության, քաղաքացիական հասարակության կայացումը, մեր կարծիքով, ընդհանրապես չի կայանա, քանզի ժամանակակից քաղաքացիական հասարակության հիմնարար պրոնեքտից է ֆիզիկական և իրավաբանական անձանց սեփականությունը, և այլ գույքային իրավունքները և դրանց երաշխավորված պաշտպանության կառուցակարգերի առկայությունը:

Տարբեր իրավական համակարգերում սեփականության ինստիտուտի իրավակարգավորումների համեմատական վերլուծության արդյունքներից կարելի է ենթադրել, որ ազգային օրենսդրությունը և իրավակիրառ պրակտիկան կարիք ունեն կատարելագործվելու ու բարելավելու: Դրան կարող են նպաստել նաև գիտական հետազոտությունները և գիտականորեն հիմնավորված առաջարկությունները:

Հենց վերը նշվածով է պայմանավորված սույն ատենախոսական հետազոտության թեմայի արդիականությունը:

Հետազոտության թեմայի գիտական մշակվածության աստիճանը.

Սեփականության ինստիտուտի ուսումնասիրությունը իրավունքի ընդհանուր տեսության տեսանկյունից ազգային իրավագիտության շրջանակներում գրեթե հետազոտված չէ: Խնդրահարույցի վերաբերյալ անդրադարձել են հիմնականում քաղաքացիական իրավունքի մասնագետները, մասնավորապես իրավագիտության դոկտոր պրոֆեսորներ՝ Տ. Կ. Բարսեղյանը, Վ. Ռ. Նազարյանը, իրավագիտության թեկնածուներ՝ Մ. Ա. Խաչատրյանը, ռուս օտար գիտնականներից՝ Ս. Ս. Ալեքսևը, Ե. Ա. Սուլխանովը, Ն. Ս. Բրատուսը և այլք:

Հավուր պատշաճի գնահատելով նշված և չնշված գիտնականների անուրանալի ներդրումը հիմնախնդրի հետազոտության ոլորտում, այդուհանդերձ, գտնում ենք, որ սույն հետազոտությունը համեստ ներդրում կհանդիսանա սեփականության ինստիտուտի լուսաբանման ասպարեզում՝ հատկապես իրավունքի ընդհանուր տեսության տեսանկյունից:

Հետազոտության օբյեկտը. Սույն ատենախոսության հետազոտության օբյեկտը սեփականության ինստիտուտն է՝ իրավունքի ընդհանուր տեսության տեսանկյունից:

Հետազոտության առարկան սեփականության ինստիտուտի էությունն ու բովանդակությունն է, ինչպես նաև դրանց առանձնահատկությունները ժամանակակից հիմնական իրավական համակարգերում՝ մայրցամաքային և ընդհանուր (նախադեպային) իրավունքում:

Հետազոտության նպատակն ու խնդիրները. Սույն ատենախոսական աշխատանքի նպատակն է սեփականության ինստիտուտի համակողմանի ուսումնասիրությունը, նրա սոցիալական և իրավական առումների բացահայտումն է՝ *ազգային և տարբեր* իրավական համակարգերում:

Դրված նպատակն իրականացնելու համար հեղինակն իր առջև խնդիր է դրել՝

- վերլուծել սեփականության ինստիտուտի բնութագրիչ հատկանիշները,

- բացահայտել սեփականության ինստիտուտի սոցիալական, տնտեսական նշանակությունը,

- վերլուծել սեփականության ինստիտուտի բովանդակային առանձնահատկությունները ռոմանագերմանական և անգլոամերիկյան իրավական համակարգերում,

- բացահայտել սեփականության ինստիտուտի նշանակությունը

քաղաքացիական հասարակության կայացման և հասարակական առաջընթացի համար:

-վերլուծության ենթարկել սեփականության ինստիտուտի պաշտպանության հիմնախնդիրը ազգային և միջազգային իրավական համակարգերում ու իրավակիրառ պրակտիկայում:

Հետազոտության մեթոդաբանական հիմունքներն են՝ դիալեկտիկայի ընդհանուր զարգացման օրենքներն ու կատեգորիաները, համընդհանուր համագիտական մեթոդները, ինչպես նաև մասնավոր իրավաբանական մեթոդները, համակարգային-կառուցվածքային և ֆունկցիոնալ վերլուծության, ձևական տրամաբանության, համեմատական-իրավաբանական և ձևական-իրավաբանական վերլուծության մեթոդները:

Հետազոտության տեսական հիմքը իրավունքի ընդհանուր տեսության և փիլիսոփայության դասական և ժամանակակից հեղինակների աշխատություններն են, որոնք նաև մեթոդաբանական հիմք են ծառայել սույն ատենախոսական

աշխատանքի համար:

Հետազոտության նորմատիվ հիմքն է ազգային և արտասահմանյան երկրների պոզիտիվ իրավունքը, մարդու իրավունքների միջազգային իրավական ակտերը, որոնք արտացոլում են սեփականության ինստիտուտի իրավաբանական բովանդակությունը, ինչպես նաև, բարձր դատարանների իրավական դիրքորոշումները:

Հետազոտության գիտական նորույթն, ամենից առաջ, արտահայտվում է և սեփականության ինստիտուտի բովանդակության բացահայտման նորարարությամբ, այն է՝ իրավունքի ընդհանուր տեսության տեսանկյունից մշակվել է հիմնադրույթներ և նոր մոտեցումներ, որոնց հանրագումարը քննարկվող հիմնախնդրի գիտական լուծում է, որն ունի աշխարհայեցակարգային և սոցիալ-իրավական նշանակություն:

Հետազոտության արդյունքները նորովի են լուսաբանում սեփականության ինստիտուտի էությունը, բովանդակությունը, սոցիալական նշանակությունը և սույն աշխատանքում այն դիտարկվում է որպես հասարակության առաջընթաց զարգացման նախադրյալ և քաղաքացիական հասարակության կայացման նախապայման, ինչպես նաև մարդու իրավունքների իրական գործադրման նյութական պատվար և անձի իրական ազատության նախապայման:

Գիտական նորույթի տարրեր են պարունակում նաև պաշտպանության ներկայացվող հետևյալ հիմնական դրույթները.

1. Սեփականության ինստիտուտը և սեփականության իրավունքը կազմում են ցանկացած քաղաքակիրթ հասարակության առանցքային հիմքը, հետևաբար առանց սեփականության որոշակի ձևի ու բովանդակության՝ ոչ մի քաղաքակիրթ հասարակարգ գոյություն ունենալ չի կարող:

Ժամանակակից հասարակությունում սեփականության ինստիտուտը ձեռք է բերել սոցիալական նշանակություն և կոչված է ծառայել ողջ հասարակության ու նրա յուրաքանչյուր անդամի համար:

2. Մեփականության ինստիտուտի իրավունքի սաղմերը ձևավորվել են դեռևս նախապատմական (տոհմային-համայնական) ժամանակաշրջանում, սակայն այն իր զարգացումը ստացավ դասակարգային հասարակությունում, երբ սեփականության իրավունքը այնպիսի օգուտներ բերեց, որը գերազանցում էր սպառման ծավալներին, այսինքն՝ առաջանում էր ապրանքի ավելցուկ և ժամանակի ընթացքում կրկնապատկվում ու եռապատկվում էր: Մասնավոր սեփականության իրավունքին զուգահեռ, հետագայում ձևավորվում է նաև հանրային սեփականության իրավունքը:

3. Դեռևս հռոմեական իրավաբանները սեփականությունը բնորոշում էին որպես գույքի նկատմամբ լիակատար տիրապետություն (իշխանություն): Նրանց համոզմամբ, սեփականությունը գույքն օգտագործելու, նրա պտուղներից օգտվելու և իրեն պատկանող գույքը տնօրինելու իրավունք է այնքանով, որքանով դա թույլատրում է իրավակարգը, քանի որ արդեն իսկ հռոմեական իրավունքում հանրության և այլ անձանց շահերի հաշվառմամբ՝ գոյություն ունեն հայեցակարգ, ըստ որի՝ սեփականությունը նաև հանրային բարիք է, հետևաբար, սեփականության իրավունքը բացարձակ չէ և ունի որոշակի սահմանափակումներ՝ հանրության շահերի պաշտպանության տեսանկյունից:

4. Սեփականությունը նախ և առաջ տնտեսական կատեգորիա է, որի շուրջ ձևավորվում են որոշակի սոցիալ-իրավական և տնտեսական հարաբերություններ սեփականատիրոջ (ով տիրապետում, օգտագործում և տնօրինում է սեփական գույքի, իրավունքի, (օրինակ՝ հեղինակային իրավունքի) ճակատագիրը) և այլ սուբյեկտների (ֆիզիկական և իրավաբանական անձանց պետության) հետ, այլ ոչ թե անձի (սեփականատիրոջ) և նյութական և ոչ նյութական բարիքների հետ (ինչպես ընդունված է գրականության մեջ), որովհետև անձը միշտ հարաբերվում է այլ անձի (կամ անձանց) հետ, այլ ոչ թե իրի հետ, որն աբսուրդ է, թե՛ տրամաբանության, և թե՛ իրավունքի տեսանկյունից:

5. Հետևաբար, սեփականությունը որպես տնտեսական կամ իրավաբանական

կատեգորիա դիտարկելիս, պետք է ելակետ ընդունել այն կանխադրույթը, որ սեփականությունը գործող «Կենդանի» կատեգորիա է՝ իր տնտեսական և իրավական առումով: «Կենդանի» կատեգորիա ասելով սույն աշխատանքում հասկացվում է որպես հարաշարժ սոցիալիզմական երևույթ, որի տնտեսական կամ իրավական դրությունը կարող է փոփոխվել հասարակական կյանքի որոշակի պայմաններում կամ իրողություններում:

6. Սեփականությունից որպես տնտեսական կատեգորիա, պետք է տարբերել սեփականության իրավունքը, որով սեփականության տնտեսական հարաբերությունները ստանում են իրենց իրավական արտահայտությունը և ամրապնդումը:

Եթե սեփականության սոցիալ-տնտեսական հարաբերությունները մարդկային հասարակության ուղեկիցն են նրա ձևավորման առաջին իսկ օրից, ապա սեփականության իրավունքը, որպես իրավական կատեգորիա, առաջանում է պետության և իրավունքի ձևավորման հետ միասին, այսինքն նախնադարյան կարգերի քայքայման և ստրկատիրական կարգերի հաստատման ժամանակ: Հասկանալի է, որ նախնադարյան հասարակարգում սեփականության հարաբերությունները միջնորդավորվել և ամրապնդվել են սոցիալական նորմերով: Այդ նորմերը գրկված են եղել պետաիրավական բնույթից, նրանց պահպանումը ապահովվում էր ոչ թե պետական հարկադրանքով, այլ հեղինակության, ավանդույթի և հասարակական կարծիքի ներգործությամբ: Միայն մասնավոր սեփականության ծագմամբ, դասակարգերի առաջացմամբ արտադրության միջոցների և արդյունքների բաշխման համակարգը ամրապնդող և դրանց օգտագործման կարգը սահմանող սոցիալական նորմերին տրվեց իրավական ուժ և ծագեց սեփականության իրավունքը:

7. Սեփականության իրավունքը իրավունքի ցանկացած համակարգում հանդես է գալիս որպես կենտրոնական ինստիտուտ: Սեփականության իրավունքի ծառայական դերն ամրապնդելն է տվյալ հասարակությունում գոյություն ունեցող

սեփականության տնտեսական հարաբերությունները:

Ցանկացած հասարակարգում ստեղծվում են սեփականության տարբեր տիպի հարաբերությունների (ֆիզիկական և իրավաբանական անձանց, պետության) և դրանց համապատասխան էլ առաջանում են սեփականության իրավունքի տարբեր ձևեր:

Հայաստանի Հանրապետությունում սեփականությունը հանդես է գալիս որպես ֆիզիկական, իրավաբանական անձանց, պետական և համայնքների սեփականության ձևերով: Դրան համապատասխան տարբերում են ֆիզիկական և իրավաբանական անձանց սեփականության իրավունք, հանրային սեփականության իրավունք, պետական սեփականության իրավունք, համայնքների սեփականության իրավունք:

8. Սույն հետազոտությունում հիմնավորվում է հեղինակային այն մոտեցումը, ըստ որի սեփականության օբյեկտ կարող են հանդիսանալ ոչ միայն նյութական և ոչ նյութական բարիքները, այլև «իրավունքը» որպես այդպիսին: Այսպես, ցանկացած իրավունքի մասին, հանդիսանա այն սեփականության, կամ որևէ այլ իրավունք, կարելի է ասել, որ այդ իրավունքը հանդիսանում է կոնկրետ անձի «սեփականություն» կամ որ այն փոխանցում են մեկ անձից մյուսին: Օրինակ, պայմանագրով պարտավորված պարտքի կամ հեղինակային իրավունքի սեփականատիրոջ կողմից տրամադրված գրքի հրատարակման արտոնագրի մասին կարելի է ասել, որ դրանք հանդիսանում են վարկառուի կամ արտոնագրի տիրոջ սեփականություն և կարող են նրանց կողմից որպես սեփականություն փոխանցվել այլ անձանց: Դա չի նշանակում, որ, այսպես կոչված, բոլոր օրինական իրավունքները կարող են փոխանցվել այլ անձանց, քանի որ որոշ իրավունքներ իրենց բնույթի ուժով բացահայտ փոխանցվող չեն, ասենք, օրինակ, հեղինակային իրավունքը: Հաճախ իրավունքները չեն կարող փոխանցվել հանրային կարգի վերաբերյալ վերապահման ուժով կամ որևէ այլ պատճառով, օրինակ, իրավախախտման արդյունքում հատուցման պահանջի

իրավունքի դեպքում (մասնավորապես ըստ ծայրահեղ անհրաժեշտության ժամանակ պատճառման վնասի հատուցման մասին հայրը): Բաց թողնելով իրավունքի չփոխանցվելու թեման, որոնց նկատմամբ սովորաբար չի կիրառվում սեփականության իրավունքի հասկացությունը՝ կարելի է պնդել, որ իրավունքը հիմնականում ունակ է հանդիսանալ որպես սեփականության օբյեկտ: Դա, սակայն, նշանակում է, որ իրավունքը իրականացվում է կոնկրետ անձանց կողմից, ովքեր էլ կարող են անվանվել այդ իրավունքների սեփականատերեր: Այս ընդհանուր իմաստով սեփականատիրոջը հղումը որևէ բան չի ասում կոնկրետ փոխանցված իրավունքի բնույթի վերաբերյալ, և այն անհրաժեշտ չէ շփոթել սեփականության իրավունքի այն կոնկրետ տեսակների հետ, որոնք դիտարկվում են որպես «սեփականության իրավունք»:

9. Անհատը՝ որպես սեփականության իրավունքի սուբյեկտ (և, առաջին հերթին, արտադրության միջոցների նկատմամբ) սեփականության իրավունքի մյուս սուբյեկտների (իրավաբանական անձ, համայնք, պետական և հասարակական կազմակերպություններ և այլն) հետ միասին քաղաքացիական շրջանառության մեջ լիարժեք ի հայտ գալու հնարավորության ելակետային հիմք ու պարտադիր նախապայմաններից է:

10. Սեփականության իրավունքը չի հանդիսանում օրինական «իրավունքի» միայն կատեգորիա, այլ իրենից ներկայացնում է իրավունքների համախումբ, բարդ համալիր, որոնց հստակ բնույթը և բովանդակությունը տատանվում է իրավական մեկ համակարգից մյուսը: Իրավունքների այս համախումբը ստորաբաժանվում է երկու կատեգորիաների, մեկը դասվող նրան, ինչը կարելի է անվանել «իրավական տիտղոսի արմատ», իսկ մյուսը «շահառուի» սեփականության իրավունքներին: Այս երկուսից առաջինը հանդիսանում է առավել արժեքավոր: Այստեղ իմաստը նրանում է, որ կոնկրետ օբյեկտի (ոչ պարտադիր նյութականի) նկատմամբ իրականացվող որոշակի իրավունքը, որը կարելի է դիտարկել նյութական շահի կամ դրամական արժեքի

տեսանկյուններից և որը կարող է իրականացվել ամբողջ հասարակության նկատմամբ, համարվում է իրավունքի օբյեկտի կամ տվյալ «առարկայի» նկատմամբ իրավական տիտղոսը կրող անձին պատկանող: Եթե նման տեսակի յուրաքանչյուր պոտենցիալ իրավունք ենթարկվեր գրանցման որոշակի համակարգի, այդ դեպքում նախնական սեփականատերը կարող էր դիտարկվել առաջին շահագրգիռ անձի որակով, իսկ տվյալ պահի փաստացի սեփականատերը որպես ձեռք բերման օրինական եղանակներից մեկով, ինչպես առք-վաճառք, նվիրատվություն, ժառանգություն և այլն, տվյալ անձից իրավական տիտղոս ստացող: Այդ իսկ պատճառով սեփականության իրավունքում տնօրինման գաղափարը խաղում է առանցքային դեր, քանի որ իրավական համակարգերն ունեն տիրապետումը որպես իրավական տիտղոսի օրինականության ծանրակշիռ ապացույց դիտարկման միտումներ (ինչպես հին հռոմեական իրավունքում):

11. Աշխատանքում հիմնավորվում է հեղինակային այն մոտեցումը, ըստ որի՝ սեփականության իրավունքն անհատների և սոցիալական կյանքի այլ սուբյեկտների (օրինակ՝ իրավաբանական անձանց) ազատությունն է ոչ միայն շուկայական հարաբերությունների ոլորտում, այլև ազատություն է դրա համարժեք իրավական ձևով և, ինչն անհրաժեշտ է հատուկ ընդձեռն, ազատություն է արտադրական միջոցների և ողջ տնտեսական շրջանառության նկատմամբ, բացառությամբ ժողովրդավարական հասարակության համար անհրաժեշտ իրավաչափ սահմանափակումների:

12. Սեփականությունը ոչ միայն մարդու ազատության և իրավունքի արտահայտման նորմատիվ ձևերից ու ուղղություններից մեկն է, այլ որպես սոցիալ-իրավական արժեք՝ այլև ինքնին բարենպաստ պայմաններ է ստեղծում սոցիումի և նրա յուրաքանչյուր անդամի ազատ, անվտանգ ու բարեկեցիկ կյանքի համար:

Հետազոտության տեսական նշանակությունը կայանում է նրանում, որ աշխատանքում ձևակերպված հետևությունները, եզրահանգումները,

եզրակացությունները և իրավաստեղծ գործունեության վերաբերյալ նորովի հարցադրումներն որ մոտեցումները խորացնում են մեր գիտելիքները սեփականության ինստիտուտի և սեփականության իրավունքի տեսության տվյալ բնագավառի վերաբերյալ և կարող են տեսական բազա հանդիսանալ հետագա ուսումնասիրությունների համար:

Հետազոտության գործնական-կիրառական նշանակությունը նրանում է, որ ատենախոսական աշխատանքի հիմնադրույթները և արդյունքները կարող են օգտագործվել սեփականատիրական հարաբերությունների իրավակարգավորումների և օրենսդրության կատարելագործման և իրավամեկնողական գործընթացներում:

Մույն հետազոտության արդյունքները կարող են օգտագործվել նաև իրավունքի տեսության և համեմատական-իրավաբանական դասընթացների ուսումնասիրության ժամանակ:

Հետազոտության արդյունքների հիմնավորվածությունը, օբյեկտիվությունը և արժանահավատությունը. Ատենախոսական աշխատանքում ստացված արդյունքները հիմնավորվում են ազգային և միջազգային նորմատիվ և դատական նյութերի մասնագիտական գրականության քննական վերլուծությամբ, մասնագիտական գրականության լիարժեք օգտագործմամբ, ինչպես նաև սահմանադրական, օրենսդրական և դատաիրավական հայեցակարգերի, նախագծերի և բարեփոխումների ծրագրերի համադրման ու իրավահամեմատական համակողմանի քննարկումների և վերլուծությունների արդյունքով:

Հետազոտության փորձաքննությունը: Մույն ատենախոսական աշխատանքը կատարվել է ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի պետաիրավական հետազոտությունների բաժնում, որտեղ տեղի է ունեցել ատենախոսության նախնական քննարկումը և երաշխավորումը:

Աշխատանքի կառուցվածքը պայմանավորված է նպատակով և առաջադրված

խնդիրներով: Ըստ այդմն էլ, աշխատանքը բաղկացած է ներածական մասից, չորս գլխից, որոնք ներառում են 12 ենթագլուխ, ամփոփումից և օգտագործված գրականության ցանկից:

Աշխատանքի համառոտ բովանդակությունը.

Ներածությունում հիմնավորվում է հետազոտության գիտական ուսումնասիրության վիճակը, հետազոտության օբյեկտը և առարկան, նպատակն ու խնդիրները, մեթոդաբանության հիմունքները, գիտական նորույթը և պաշտպանության ներկայացվող դրույթները, աշխատանքի գիտական և գործնական նշանակությունը:

Աշխատանքի առաջին գլուխը՝ **«Սեփականության ինստիտուտի ընդհանուր բնութագիրը՝ պատմական և հասարակական զարգացման տեսանկյունից»** վերտառությունը, որը բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին գլխի առաջին ենթագլխում՝ **«Սեփականության ինստիտուտը որպես կազմակերպված հասարակության հիմք»** վերնագրով, հեղինակը հիմնավորում է, որ ցանկացած կազմակերպված հասարակության սոցիալ-տնտեսական հիմքը՝ սեփականության ինստիտուտն է:

Երկրորդ ենթագլխում՝ **«Սեփականության ինստիտուտի պատմական զարգացման տեսական հարցադրումներ»** վերնագրով, հեղինակը պատմական և համակարգված մեթոդաբանությամբ ներկայացնում է սեփական ինստիտուտի բովանդակային առանձնահատկությունները պատմական զարգացման հիմնական շրջափուլերում:

Երրորդ ենթագլխում՝ **«Սեփականությունը և հասարակական առաջընթացը»** վերնագրով, հեղինակը հիմնավորում է, որ հասարակության զարգացման նախապայմաններից է նաև սեփականության ինստիտուտի բնականոն գործառնությունը:

Աշխատանքի երկրորդ գլուխը՝ **«Սեփականությունը և իրավունքը»** վերնագրով,

բաղկացած է երեք ենթագլխից:

Երկրորդ գլխի առաջին ենթագլխում՝ **«Սեփականության ինստիտուտի իրավական կարգավորման հիմնախնդիրը»** վերնագրով, հեղինակը բացահայտում է սեփականության ինստիտուտի իրավական կարգավորման մեխանիզմի բովանդակային առանձնահատկությունները և արդյունավետության բարձրացման հետ կապված հարցերը:

Երկրորդ ենթագլխում՝ **«Սեփականության իրավունքի բովանդակությունը և բնութագրական հատկանիշները»** վերնագրով, հեղինակը բացահայտում է սեփականության ինստիտուտի ոչ միայն հայտնի եռամիասնական իրավագործությունները, այլև ներկայացնում է դրանց բովանդակության էվոյուցիոն զարգացման առանձնահատկությունները արդի իրավունքի տեսությունում և պրակտիկայում:

Երրորդ ենթագլխում՝ **«Սեփականության իրավունքի ինտերպրետացիան (մեկնությունը) փիլիսոփայության տեսանկյունից»** վերնագրով, հեղինակը փիլիսոփայության տեսանկյունից բացահայտում է սեփականության ինստիտուտի սոցիալական նշանակությունը, որը կապված է մարդու բնական և անօտարելի իրավունքների հետ:

Աշխատանքի երրորդ գլուխը՝ **«Սեփականության ինստիտուտի իրավակարգավորումների առանձնահատկություններն արդի ժամանակաշրջանի առաջատար իրավական համակարգերում»** վերտառությամբ, բաղկացած է չորս ենթագլխից:

Առաջին ենթագլխում՝ **«Սեփականության ինստիտուտը ռոմանագերմանական իրավական համակարգերում»** վերնագրով, հեղինակը հանգամանորեն քննարկել է սեփականության ինստիտուտի բովանդակային առանձնահատկությունները մայրցամաքային (ռոմանագերմանական) իրավական համակարգում:

Երկրորդ ենթագլխում՝ **«Սեփականության ինստիտուտի ընդհանուր**

բնութագիրը անգլոամերիկյան իրավունքի համակարգում» վերնագրով, հեղինակը բացահայտում է սեփականության ինստիտուտի բովանդակային առանձնահատկությունները ընդհանուր իրավական (անգլո-ամերիկյան) իրավական համակարգում:

Աշխատանքի երրորդ գլխի երրորդ և չորրորդ ենթագլուխներում հեղինակը բացահայտում է «թրաստի» ինստիտուտի էությունը և առանձնահատկությունները անգլո-ամերիկյան իրավունքում, որը հայտնի չի ռուսալեզու բնակչության իրավունքին:

Աշխատանքի չորրորդ գլխում՝ **«Սեփականության իրավունքի պաշտպանության հիմնախնդիրները»** վերտառությամբ, բաղկացած երեք ենթագլխից, որոնցում հանգամանորեն լուսաբանվում են սեփականության ինստիտուտի պաշտպանության էությունը, դրա առանձնահատկությունները ազգային և միջազգային իրավական համակարգերում, իրավակիրառ և դատական պրակտիկայում:

Եզրակացություն

1. Սեփականության իրավունքը, մարդու բնական և անօտարելի իրավունքն է, հետևաբար դրա երաշխավորված պաշտպանությունը պետության և նրա ինստիտուտների կարևոր գործառնություններից է: Այս առումով անհրաժեշտ է ընդգծել, որ մինչև 2018թ. ապրիլ-մայիս ամիսներին կայացած խաղաղ, թավշյա հեղափոխությունը, սեփականության պաշտպանության խնդիրը մեր երկրում բավարար չի եղել: Այսպես, 2019 թվականի հոկտեմբերի 31-ի դրությամբ Մարդու Իրավունքների Եվրոպական դատարանը կայացրել է 20 վճիռ ընդդեմ Հայաստանի Հանրապետության սեփականության իրավունքի խախտումների վերաբերյալ, որից 12-ը վերաբերում է Երևանի Բյուզանդի փողոցի քաղաքացիների օրինական իրավունքների մասսայական խախտումներին:

Այս բոլորը վկայում են սեփականության և սեփականության իրավունքի գիտական հետազոտությունների անցկացման անհրաժեշտությունը և

արդիականությունը:

2.Սեփականության, այդ թվում մասնավոր սեփականության իրավունքի վերաբերյալ ամբողջական տեսական ուսմունքը (հայեցակարգը) մշակվել է Հին Հռոմի իրավաբանների կողմից Այս տեսանկյունից անհրաժեշտ է ընդգծել, որ հռոմեական իրավաբանական միտքը հենվում էր հին հունական փիլիսոփայության հիմնադրույթների վրա: Հին հռոմեացիների կողմից մշակված մասնավոր իրավունքի, այդ թվում սեփականության և գույքի տիրապետման մասին ուսմունքը էական նշանակություն ունեցավ իրավունքի (քաղաքացիական իրավունքի) հետագա զարգացման վրա, ընդհուպ մինչև ներկա ժամանակաշրջանը:

Հռոմեական իրավաբանների ջանքերով ստեղծված սեփականության իրավունքի ուսմունքը, դարձավ ամբողջ իրավաբանական գիտության և քաղաքացիական օրենսդրության հետագա զարգացման հիմքը:

3.Իրավական ուսմունքների պատմության մեջ գերմանացի խոշորագույն փիլիսոփա Հեգելին է պատկանում այն պատիվը, որ փիլիսոփայորեն հիմնավորվել է սեփականության ինստիտուտի անհրաժեշտությունը քաղաքացիական հասարակության կայացման և զարգացման գործում:

Ըստ Հեգելի իրավական հայեցակարգի, սեփականության բանական լինելը ոչ թե պահանջմունքների բավարարման միջոց է, այլ անձի սեփականության լիարժեք իրավասությունների մեջ է: Միայն սեփականության մեջ է անձը հանդես գալիս որպես բանական էակ և իրավունքի լիարժեք սուբյեկտ:

4.Սեփականության ինստիտուտը և սեփականության իրավունքը շատ բազմաշերտ և բազմակողմ երևույթ են:

Սեփականության իրավունքը հիմնադիր և կենտրոնական տեղ է գրավում քաղաքացիական շրջանառության և գույքային իրավունքների համակարգում: Այլ գույքային իրավունքները կապված են սեփականության իրավունքի հետ և մեծամասամբ ծագում են սեփականության իրավունքից:

Սեփականության իրավունքը, որպես գույքային իրավունքի տեսակ,

բնութագրվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրքի 170 հոդվածում ամրագրված գույքային իրավունքներին բնորոշ հատկանիշներով: Սեփականության իրավունքը գույքային իրավունքների մեծ մասի նման անժամկետ է, մինչդեռ առանձին գույքային իրավունքներ (օրինակ՝ գրավի իրավունքը) իրենց ծագման պահին արդեն իսկ ենթադրում են ժամկետայնություն: Սեփականատերն իրավագործ է իրեն պատկանող գույքը տնօրինել իր հայեցողությամբ և բացարձակ ձևով՝ ողջախոհության սահմաններում: Այդ նշանակում է, որ սեփականության իրավունքը սահմանում է անձի անմիջական և անվերապահ իշխանությունը գույքի նկատմամբ, որի ուժով նա ազատ է, առանց ուրիշի միջամատության, միանգամայն ինքնուրույն («իր հայեցողությամբ») տնօրինել իրեն պատկանող գույքը, այսինքն՝ որոշել այդ գույքի իրավաբանական ճակատագիրը՝ իրավական սահմաններում:

5.Սոցիալիստների պնդումը, թե մասնավոր սեփականության ոչնչացումով ի օգուտ հանրային սեփականության միջոցների, պարտադրության ծավալը կաճի, ակնհայտորեն արտուրդ է թվում, սակայն շատ մարդիկ շարունակում են հավատալ այդ արտուրդին: Ըստ սոցիալիստարքսիստների, սեփականությունն առաջացել է մարդկային բնության անկատարության պատճառով, ամրապնդվել է տարօրինակ գաղափար, որ սեփականության վերացումը խթան կհանդիսանա մարդու կերպարանափոխման համար: Այս կեղծ փաստարկն օգնեց օրինականացնել բոլշևիկների կողմից: Սակայն սոցիալիստական ճամբարի փորձն ապացուցեց այդ մոտեցման անհեթեթությունը և հանրային կամ սոցիալիստական սեփականությունը չզարգանալով կործանվեց, քանի որ այն անդամ և բովանդակագուրկ գաղափար էր սեփականության մասին, մոռանալով, որ սեփականությունը «կենդանի» կատեգորիա է, այն կարող է փոխվել կամ արտահայտվել տարբեր ձևերով, բայց միշտ պահպանել իր դեմքը և բովանդակությունը՝ որպես հասարակության զարգացման խթան և մարդու իրավունքների երաշխավորված պաշտպանության միջոց:

6.Քսաներորդ դարում ավանդույթ դարձավ սեփականությունը որպես

«իրավունքների փաթեթ» սահմանելը: Բոլորից ամենակարևորը հետևյալ իրավունքներն են՝ օգտագործել իրը և բացառել դրա օգտագործումն այլոց կողմից, փոխել իրի ձևն ու կառուցվածքը, օգտվել դրա բերած օգուտներից՝ ներառյալ եկամուտը, վերջապես, բայց ոչ պակաս կարևոր, դրա սեփականության իրավունքը փոխանցել մեկ ուրիշին: Տարբեր իրավական համակարգերի տարածքներում սեփականության իրավունքը նշանակում է գրեթե նույնը: Այս առումով սեփականության բնույթը երկակի հատկանիշ ունի, մի կողմից՝ սեփականատերը և սեփականությունը հանդես են գալիս մեկ միասնական ամբողջությամբ (երբ սեփականատերն անմիջականորեն է տիրապետում, օգտագործում և օտարում գույքը), մյուս կողմից՝ տարանջատված եղանակով (երբ սեփականությունը տիրապետում, օգտագործում և օտարում է հավատարմագրային կառավարիչը (թրաստի օրինակով)՝ ի օգուտ հիմնական (սկզբնական) սեփականատիրոջ շահերի:

7.Սեփականատիրոջ երեք իրավագործությունն առանձին-առանձին ու երբեմն էլ՝ միասին, կարող են պատկանել նաև ոչ սեփականատիրոջը, օրինակ՝ վարձակալին: Քանի որ վարձակալը՝ սեփականատեր-վարձատուի հետ կնքված պայմանագրի հիման վրա ոչ միայն տիրապետում և օգտագործում է վերջինիս գույքը, այլև իրավունք ունի վարձատուի համաձայնությամբ գույքը ենթավարձակալության հանձնել այլ անձի (ենթավարձակալի), կամ, օրինակ՝ բարելավումներ կատարել գույքում՝ էականորեն փոխելով դրա նախնական վիճակը, այսինքն՝ որոշակի սահմաններում տնօրինել գույքը: Հետևաբար, ակնհայտ է, որ իրավագործությունների այս եռյակն, ինքնին, անբավարար է սեփականության իրավունքը բնութագրելու համար: Ավելին՝ սեփականատիրոջ իրավագործությունների, որպես եռյակի հնարավորության առկայությունը բնութագրական է սոսկ մեր և մի քանի այլ պետությունների (Ռուսաստանի Դաշնություն, Ղազախստան, Ուզբեկստան, Հունգարիա և այլն) ազգային իրավակարգերին: Հետևաբար, սեփականության իրավունքը բնութագրելիս, նշված իրավագործությունների հետ միասին, վճռորոշ նշանակություն ունի սեփականատիրոջ ունակությունը բացառապես իր ցանկությամբ («իր

հայեցողությամբ») ներգործել գույքի վրա՝ իրականացնել բացառապես իրեն պատկանող գույքը տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավագործությունները: Վարձակալը վարձակալած գույքը ենթավաճակալության հանձնելիս գործում է ոչ թե իր հայեցողությամբ, այլ գույքի սեփականատիրոջ թույլատվությամբ, այսինքն՝ վերջինիս հայեցողությամբ:

8.22 ՔՕ-ում սեփականության իրավունքի հիմնական բովանդակությունը դրսևորվում է սեփականատիրոջ իրավագործությունների, հայտնի «եռյակի» միջոցով: Այսպես, համաձայն Քաղ. օրենսգրքի 163-րդ հոդվածի 1-ին կետի, սեփականատերն իրավունք ունի՝ տիրապետել, օգտագործել և տնօրինել:

Սեփականատերն իրավունք ունի իր գույքն օգտագործել ձեռնարկատիրական նպատակներով և, անգամ, ոչնչացնել այն, եթե դրանով չեն խախտվում օրենքի ու այլ իրավական ակտերի պահանջները, ինչպես նաև այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը:

Նշված իրավագործություններն իրենց հանրագումարում արտացոլում են սեփականատիրոջը տրամադրված բոլոր հնարավորությունները: Այս եռյակն այլ, օրինակ՝ կառավարման, իրավագործությամբ լրացնելու առաջարկի համակողմանի քննարկումների արդյունքում ակնհայտ դարձավ, որ վերջինս ոչ թե սեփականատիրոջը տրամադրված ինքնուրույն հնարավորություն է, այլ, սուկ, նրա ունեցած իրավագործությունների իրականացման եղանակ՝ սեփականության իրավունքի իրացման ձև:

9.Ժամանակակից արտասահմանյան երկրների օրենսդրությունում նույնպես առկա են սեփականության իրավունքի այլ բնորոշումներ: Այսպես՝ համաձայն Գերմանիայի քաղաքացիական օրենսգրքի §902-ի՝ սեփականատերը «կարող է իր գույքը տնօրինել իր հայեցողությամբ և ուրիշներին մեկուսացնել դրա վրա որևէ ազդեցություն գործելուց»: Ֆրանսիայի քաղաքացիական օրենսգրքի 544 հոդվածի համաձայն՝ սեփականատերը «Գույքն օգտագործում և տնօրինում է առավել բացարձակ ձևով»: Անգլամերիկյան իրավունքում, որն իր նախադեպային բնույթով

չունի սեփականության լեզավ (օրենսդրական) բնորոշում, հետագոտողները հաշվում են սեփականատիրոջ՝ մինչև 10-12 իրավագործություն, որոնք տարբեր գույքորոշումներով միաժամանակ ունակ են լինել տարբեր անձանց մոտ:

Վերջապես, անգամ սեփականատիրոջ մյուս իրավագործությունների եռյակի առկայությունը ոչ միշտ է վկայում տրամադրված հնարավորությունների ծավալի (մեծության) մասին: Օրինակ՝ հայկական և ռուսական օրենսդրության համաձայն՝ հողամասի սեփականատերն իրավունք չունի իրեն պատկանող հողամասն օգտագործել դրա նպատակային նշանակությանը հակառակ: Բնապահպան պահանջների խախտման և հողամասը ոչ ռացիոնալ օգտագործելու դեպքում սեփականատերն ընդհանրապես կարող է զրկվել իրեն պատկանող հողամասից:

10. Քաղաքացիական օրենսդրությունում գործում է կանխավարկած համաձայն որի՝ սեփականատերը գործում է իր իրավունքների շրջանակում, իսկ նա, ով գտնում է, որ սեփականատերը դուրս է եկել այդ շրջանակից, պարտավոր է ինքն ապացուցել համապատասխան սահմանափակումների անտեսումը:

Ռոշշակի հանգամանքներում (օրինակ՝ գույքի վրա կալանք դնելու դեպքում) սեփականատերը կարող է զրկվել բոլոր երեք իրավագործությունից, որը, սակայն, մեխանիկորեն չի հանգեցնում նրա սեփականության իրավունքի կորստի: Նման իրավիճակը կրում է ժամանակավոր բնույթ և սեփականատերը կարող է կամ վերականգնել իր իրավունքը կամ էլ, այդ իրավունքը կարող է դադարել օրենքով նախատեսված հիմքերով:

Այսպիսով, անգամ ժամանակավորապես զրկված լինելով իր գույքի տիրապետման, օգտագործման և, նույնիսկ՝ տնօրինման իրավագործություններից, սեփականատերը չի կորցնում այդ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը: Դա վկայում է սեփականության իրավունքի, որպես վերը նշված իրավագործությունների ոչ թե պարզ հանրագումարի, այլ դրանց ամբողջական համակարգի մասին, որը միշտ էլ մեծ է իր տարրերի գումարից: Սեփականությունը

նման տարրեր պարունակող համակարգ է՝ օժտված միայն իրեն, որպես համակարգի, բնորոշ հատկություններով: Սեփականության իրավունքի՝ ինքնին վերադառնալու (վերականգնվելու, «վերածնվելու»), այս հատկությունը հռոմեական իրավաբանները համարում էին այդ իրավունքի «ճկունությունը»: Սեփականության իրավունքը կարող է սահմանափակվել: Սեփականության իրավունքի ոչնչացումը չպետք է վնաս պատճառի շրջակա միջավայրին, խախտի այլ անձանց, հանրության և պետության իրավունքներն ու օրինական շահերը:

11. Պետության՝ սեփականության իրավունքը հարգելու պարտավորության առումով նա պետք է ձեռնպահ մնա որևէ անձի սեփականության իրավունքներին միջամտելուց: Հանրային և մասնավոր շահերի հավասարակշռման և սեփականության սոցիալական գործառույթի վերաբերյալ վերն ասվածի լույսի ներքո այս պարտավորությունն արգելում է պետությանը կամայականորեն միջամտել որևէ անձի սեփականության իրավունքներին և անձին անհամապատասխան ծանր բեռի տակ դնել: Նմանապես պետության պարտավորությունը պահանջում է, որ նա պաշտպանի երրորդ անձանց միջամտությունից՝ մասնավորապես, գողությունը քրեորեն պատժելի դարձնելով և սոցիալական այնպիսի կարգ պահպանելով, որ սեփականության իրավունքները պատրանք չդառնան: Սեփականություն ունենալու իրավունքն իրականացնելու պարտավորությունը կարծես ավելին է պահանջում, քան, այսպես կոչված, սեփականության իրավունքը: Որպեսզի սեփականություն ունենալու իրավունքն իրականացվի, և յուրաքանչյուրն իսկապես օգտվի սեփականության իրավունքից, յուրաքանչյուր անհատ պետք է կարողանա օգտվել սեփականության որոշակի նվազագույն այն չափից, որն անհրաժեշտ է արժանապատիվ կյանքով ապրելու համար, ներառյալ սոցիալական ապահովագրությունը և սոցիալական աջակցությունը: Եթե սեփականության իրավունքի իրականացումը սեփականություն ունենալու իրավունք է ստեղծում միայն նրանց համար, ովքեր սեփականություն ձեռք բերելու հնարավորություն ունեն, և

ապահովում է այդ առկա սեփականության իրավունքների պաշտպանությունը կամայական միջամտությունից, ապա դժվար է, գոնե բարոյական տեսանկյունից, սեփականության իրավունքն արդարացնել:

12. Ազգային օրենսդրության համար սեփականատիրոջ նոր իրավագործությունն է իր գույքն այլ անձի հավատարմագրային կառավարման հանձնելը: Նման դեպքում գույքի փոխանցումը չի հանգեցնում սեփականության իրավունքի փոխանցման: Հավատարմագրային կառավարման մասին պայմանագիրը հնարավորություն է ընձեռում սեփականատիրոջն իր գույքը մասնագետ-կառավարչին փոխանցելու միջոցով, ի շահ իրեն, կամ իր կողմից նշված երրորդ անձի՝ շահառուի (բենեֆիցիարի), հասնել գույքի առավել արդյունավետ օգտագործման: Նման հարաբերությունների օրինակ կարող է ծառայել, մի կողմից՝ խնամակալության ու հոգաբարձության մարմնի և, մյուս կողմից՝ հավատարմագրային կառավարչի միջև կնքված պայմանագիրը՝ խնամարկյալի անշարժ ու արժեքավոր շարժական գույքը հավատարմագրային կառավարման հանձնելու մասին (ՔՕ 40):

13. ՀՀ ՔՕ-ում նախատեսված գույքի հավատարմագրային կառավարման ինստիտուտը, բովանդակային առումով, ընդհանուր ոչինչ չունի «վստահելիության սեփականության» («թրաստի») հետ: Հավատարմագրային կառավարման դեպքում «խնամարկյալի անշարժ և արժեքավոր շարժական և գույքի մշտական կառավարման անհրաժեշտության դեպքում, խնամակալության ու հոգաբարձության մարմինն այդպիսի գույքի հավատարմագրային կառավարման պայմանագիր է կնքում իր կողմից նշանակված կառավարչի հետ» (ՔՕ 40), կամ կտակակատարը ժառանգվող գույքը հանձնում է հավատարմագրային կառավարման ոչ թե ի շահ իրեն, այլ ի շահ ժառանգի (ՔՕ 1212): Երկու դեպքում էլ սեփականատերը մնում է խնամարկյալը կամ շահառուն (ժառանգը):

14. Ի տարբերություն հավատարմագրային կառավարմանը, «թրաստը» (անզլերեն՝ էսթեվտահություն), այսպես կոչված՝ «արդարության իրավունքի» վրա

հիմնված հարաբերությունների բարդ համակարգ է, որի դեպքում «թրաստ» հիմնադրող սեփականատերը (սեթլորը) իր իրավունքներով օժտում է կառավարչին (Էրասթին), որը, գույքային շրջանառությունում հանդես գալով սեփականատիրոջ դերում, պետք է ստացված եկամուտը հանձնի շահառուին (բենեֆիցիարին) և գործի ի շահ վերջինիս: Ընդ որում, սեփականատեր-հիմնադիրը և շահառուբենեֆիցիարը կարող են նույն անձը լինել: Քաղաքացիական իրավունքի անգլոամերիկյան համակարգում «թրաստի» հարաբերության բոլոր թվարկված մասնակիցներն ունեն սեփականատիրոջ իրավագործություններ, այսինքն նրանցից յուրաքանչյուրը սեփականության իրավունքի սուբյեկտ է: Նման իրավիճակը հնարավոր է, քանի որ այդ համակարգն ունի իր սեփական մոտեցումը սեփականության իրավունքի բովանդակության և իրականացման խնդրում:

15. «Թրաստի» գնահատումը քաղաքացիական իրավունքի մայրցամաքային համակարգին ներհատուկ մոտեցման դիրքերից անխուսափելիորեն հանգեցնում է տարիմաստային (պարադոքսային) վիճակի: «Թրաստի» մասնակիցներից և ոչ մեկն օժտված չէ սեփականատիրոջ իրավագործությունների ամբողջ համալիրով, սակայն նրանցից յուրաքանչյուրը տիրապետում է այդ իրավագործությունների ինչոր մասի: Մտացվում է, որ միասնական սեփականության իրավունքը «ճեղքվում է» մի քանի սուբյեկտների միջև և դրա համար էլ անհնարին է ասել, թե նրանցից ով է «թրաստ» հանձնված գույքի սեփականատերը: Անգլոամերիկյան համակարգում այդ իրավիճակը չի հանգեցնում հակասությունների, քանի որ այնտեղ սեփականության իրավունքը, ինչպես նշվեց, բաղկացած լինելով տասից ավելի տարբեր իրավագործություններից(տարրերից), ունակ է տարբեր գուգորդումներով տալ այդ իրավունքի շուրջ մեկ ու կես հազար տարբերակներ:

16. Նախադեպային իրավունքի ավանդույթների վրա հիմնված և իրենց արմատներով ավատատիրական իրավակարգ գնացող այդ գուգորդություններն օտար են եվրոպական մայրցամաքային համակարգին, որին օտար է նաև

անգլոամերիկյան համակարգում առկա «ընդհանուր» և «արդարության» իրավունքի համակարգերի գոյությունը: Քաղաքացիական իրավունքի եվրոպական (մայրցամաքային) համակարգի հիմնական դրույթներից մեկը միևնույն գույքի նկատմամբ սեփականության մեկից ավելի, իրավունքի գոյության անհնարինությունն է: Մայրցամաքային պատկերացմամբ սեփականության իրավունքն անհնարին է «ճեղքել»՝ այն կամ լիովին պահպանվում է սեփականատիրոջ մոտ, կամ էլ լիովին օտարվում է նրանից:

Եվրոպական մայրցամաքային իրավունքում հիշյալ դրույթի ցանկացած խախտումը հանգեցնում է անլուծելի կոլիզիայի (հակասության): Դրա համար էլ սեփականատիրոջ կողմից իր իրավագործությունների մի մասը կամ նույնիսկ բոլորն այլ անձի, ներառյալ՝ կառավարչին հանձնելն ինքնին չի հանգեցնում սեփականության իրավունքի կորստի, թեկուզ և այն հանգամանքի ուժով, որ սեփականության իրավունքը չի սպառվում այդ իրավագործություններով:

Նման փոխանցումն իրականում նշանակում է սեփականատիրոջ իրավագործությունների իրականացման, և ոչ թե նրան պատկանող իրավունքի և (կամ) գույքի, օտարման եղանակ:

17. Գործնականում «արդարության իրավունքի» բացակայությամբ «թրաստի» ներդրումը քաղաքացիական իրավունքի եվրոպական (մայրցամաքային) համակարգում, ներառյալ այդ համակարգի մեջ ընդգրկված Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունքում, կհանգեցնի «թրաստ» հիմնադրող սեփականատիրոջ հետ հարաբերություններում կառավարչի լիակատար անվերահսկելիության, ներառյալ՝ այն դեպքում, երբ այդ սեփականատերը հանդես է գալիս շահառուի դերում: Չէ որ Եվրոպական իրավունքում հարաբերությունների «վստահելիությունը», սուկ, նշանակում է ցանկացած պարտավորություն առանց շարժառիթների դադարեցնելու հնարավորություն, որն առկա է, օրինակ՝ հանձնարարության պայմանագրում: Ակնհայտ է, որ անհրաժեշտ գիտելիքներից

գուրկ սեփականատիրոջ համար, որը տվյալ հարաբերությունների մեջ է մտնում իր գույքը կամ դրա մի մասը մասնագետձեռնարկատիրոջ կառավարմանը հանձնելու նպատակով, «վստահելիության» այնպիսի .դրստորումները, ինչպիսիք մասնագետ (պրոֆեսիոնալ) կառավարչի պարբերաբար հաշվետվություններ ներկայացնելու պարտականություններն են, չեն կարող լուրջ երաշխիք լինել նման սեփականատիրոջ գույքային շահերի պահպանման համար: Հասկանալի է նաև, թե տնտեսության համար ինչպիսի բացասական հետևանքների կարող է հանգեցնել մեզանում «թրաստի» տարածումը, հատկապես, երբ այդ ճանապարհով մասնավոր կառավարչին հանձնվի պետության կամ համայնքների գույքը:

18. Վերլուծելով տարբեր իրավական համակարգերում սեփականության իրավունքի էությունը, բովանդակությունը և առանձնահատկությունները, հանգում ենք այն տեսակետին, որ ընդհանրություններն ավելի են, քան դրանց տարբերությունները: Դեռ ավելին, նմանությունները (ընդհանրությունները) բովանդակային են, իսկ տարբերությունները ձևական-իրավական բնույթի են:

Այսպես, եթե ռոմանագերմանական իրավունքում սեփականության բովանդակության մեջ հստակորեն ընդգծվում են երեք իրավագորությունները (տիրապետում, օգտագործում, օտարում), իսկ ընդհանուր իրավունքում բացի նրանից, որ այդպիսի հստակ բաժանում գոյություն չունի, սակայն ավելանում է սեփականության բոլորովին այլ իրավական կարգավորում՝ թրաստի ինստիտուտ, որը խորթ է ռոմանագերմանական իրավունքում, իսկ կրոնական-իրավական համակարգերում (մահմեդական, հինդուսական) ընդհանրապես բացակայում են սեփականության բովանդակության տարանջատված իրավագորությունները և թրաստի ինստիտուտը, սակայն նշված բոլոր իրավական համակարգերում սեփականությունը դիտարկվում է աձեռնմխելի և մարդու հիմնական իրավունքներ, որով, ըստ էության, պայմանավորված է անձի ազատությունը և ինքնավարությունը: Այսինքն սեփականության ինստիտուտը բովանդակային առումով և

փիլիսոփայական տեսանկյունից գրեթե ընդհանրական է բոլոր իրավական համակարգերում, իսկ ձևական-իրավական տարբերությունները դրսևորվում են սեփականության իրավական կարգավորումների ոլորտում (օրինակ՝ սեփականության ծագման (ձեռքբերման), սեփականության իրավունքի սահմանաների պաշտպանության (դատական և արադարադատական) և այլն:

Մարդու իրավունքների՝ որպես փոխկախյալ և անբաժանելի ամբողջության ընկալումը պահանջում է սեփականության իրավունքի ավելի լայն մեկնաբանություն, որն այլ իրավունքներից, այդ թվում սոցիալական իրավունքներից, արդյունավետ օգտվելը չի խոչընդոտում:

Ատենախոսական աշխատանքի հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ գիտական հրապարակումներում՝

ա) Մենագրություններ

1. Դավթյան Ա. «Սեփականության իրավունքը ժամանակակից իրավական համակարգերում»./ Ա.Ռ. Դավթյան.-Երևան, Եվրոպրինտ, 2021թ., 172 էջ:
2. Դավթյան Ա. «Սեփականության իրավունքի էությունը և բովանդակությունը տարբեր իրավական համակարգերում»/ Ա.Ռ. Դավթյան.-Երևան, Եվրոպրինտ, 2021թ., 136 էջ:

բ) գիտական հոդվածներ

- 3.Դավթյան Ա. «Սեփականության իրավունքի հասկացությունը և առանձնահատկությունները ընդհանուր իրավունքում». «Օրինականություն» ՀՀ դատախազության գիտագործնական և ուսումնամեթոդական հանդեսի թիվ 122, էջ 13-61, 71, Երևան 2021թ:
4. Դավթյան Ա. «Սեփականության ինստիտուտը իրավունքի փիլիսոփայության տեսանկյունից». «Օրինականություն» ՀՀ դատախազության գիտագործնական և ուսումնամեթոդական հանդեսի թիվ 123, էջ 71, 13-16, 2021թ:
- 5.Դավթյան Ա. Սոցիալական պետություն և սեփականություն//«Փիլիսոփայությունը արդի աշխարհում» գիտական հոդվածների ժողովածու: Երևան, 2021, էջ 263-283:
6. Դավթյան Ա. «Սեփականության իրավական կարգավորումն ըստ մասնեղական իրավունքի//«Փիլիսոփայությունը արդի աշխարհում» գիտական հոդվածների ժողովածու: Երևան, 2021, էջ 306-316:

Давтян Артур Размикевич

Сущность и содержательные особенности права собственности в разных правовых системах: теоретико и сравнительно-правовое исследование.

Резюме

Актуальность исследования данной работы обусловлена возрастающей ролью института права собственности в процессе праворегулирования общественных отношений. Актуальность исследования проблемы наиболее важна в контексте осуществленных и предстоящих конституционных реформ в Республике Армения.

В сфере нормативного регулирования института собственности необходимо также по-новому интерпретировать содержание и основные особенности права собственности в разных право-системах.

Основной целью данной исследовательской работы является подвержение комплексному анализу понятие и концепции института собственности в правовых системах и их общности и особенности.

Новизна данного исследования заключается в комплексном и системном анализе понятия института собственности в экономической и юридической аспектах.

В соответствии с этим выделяются понятия собственности в исторической и настоящей плоскостях. В связи с этим исследование вопроса имеет определенное историческое познавательное научно-практическое значение для поиска правомерных решений проблем, существующих в разных правовых системах.

Элементы научной новизны содержатся в основных положениях, представляемых к защите, а также в теоретических выводах, заключениях и практических предложениях разработанных на основе результатов исследований.

Собственность является одним из ключевых, поворотных пунктов в истории права, ставшим мощным, не имеющим альтернативы и аналога источником силы

людей..

В настоящей работе института собственности рассматривается, что собственность во всем объеме своих качеств и достоинств - это частная собственность, т.е. собственность человека, конкретного лица, полное обладание которого вещами, иными предметам~~ь~~ предметами напрямую соприкасается, контактирует с его волей и интересами.

Для собственности характерно такое широкое, наиболее полное обладание человеком вещами, иными предметами, которое само по себе требует упрочения и развития.

Собственность в этой связи становится фактором активности, озабоченности и ответственности человека за ее использование и судьбу. Такое воздействие, которое активизирует личность, ее творческий потенциал и таким путем приносит благо и самому человеку, и всему сообществу людей.

Практическое значение исследования заключается в том, что сформулированные выводы и предложения могут способствовать повышению качества и эффективности праворегулирования института собственности.

Высказанные авторские суждения могут быть полезными для уточнения не только доктринального, но и практико-прикладного понимания сущности и содержания права собственности.

Материалы исследования также могут быть использованы сотрудниками законодательной власти и управления, а также в учебном процессе по предметам теории права, конституционного и административного права и других отраслевых дисциплин.

Основные положения диссертации нашли свое отражение в положениях, выносимых на защиту диссертации, и в опубликованных автором научных статьях.

Davtyan Artur Razmiki

Essence and content features of property rights in different legal systems: theoretical and comparative legal research

Thesis Abstract

The relevance of the study of this work is due to the growing role of the institution of property rights in the process of legal regulation of social relations. The relevance of the study of the problem is most important in the context of the implemented and upcoming constitutional reforms in the Republic of Armenia.

In the field of normative regulation of the institution of property, it is also necessary to interpret the content and main features of property rights in different legal systems in a new way.

The main purpose of this research work is to subject to a comprehensive analysis the notions and concepts of the institution of property in legal systems and their commonality and features.

The novelty of this study lies in a comprehensive and systematic analysis of the concept of the institution of property in economic and legal aspects.

In accordance with this, are distinguished the concepts of property at the historical and present levels. In this regard, the study of the issue has a certain historical cognitive scientific and practical significance for the search for legitimate solutions to problems that exist in different legal systems.

Elements of scientific novelty are contained in the main provisions submitted for defense, as well as in theoretical withdrawals, conclusions and practical proposals developed on the basis of research results.

Property is one of the key, turning points in the history of law, which has become a powerful, having no alternative and analogue source of people's strength.

In the present work of the institute of property, it is considered that property in its entire scope of qualities and merits is a private property, that is, the property of a person, a specific person, whose full possession of things, other objects directly comes in touch, contacts with his will, interests.

Property is characterized by such a wide, most complete possession by a person of things, other objects, which in itself requires strengthening and development.

Property in this regard becomes a factor of activity, concern and responsibility of a person for its use and destiny. Such an impact that activates the personality, its creative potential and in this way benefits both the person himself and the entire community of people.

The practical significance of the study lies in the fact that the formulated conclusions and proposals can help improve the quality and efficiency of the legal regulation of the institution of property.

The expressed opinions of the author can be useful for clarifying not only the doctrinal, but also the practical and applied understanding of the essence and content of property rights.

The research materials can also be used by employees of the legislative branch and administration, as well as in the educational process in the subjects of the theory of law, constitutional and administrative law and other industry disciplines.

The main provisions of the dissertation are reflected in the provisions submitted for the defense of the dissertation and in scientific articles published by the author.